# Տաղանդների առակը

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

Կարդացեք Մատթեոս 25.14-30-ը կամ դիտեք «Տաղանդների մասին առակը» տեսանյութը (3:03), ChurchofJesusChrist.org կայքում: Հետևյալ տեղեկությունը կարող է օգտակար լինել այս առակի ուսումնասիրության ժամանակ.

- Հին ժամանակներում «տաղանդը» նշանակում էր շատ մեծ գումար: Այս առակում այն խորհրդանշում է «շատ արժեքավոր մի բան», օրինակ՝ ավետարան կամ օրհնություններ, պարգևներ, կարողություններ և հնարավորություններ, որոնք Աստված պարգևում է մեզ (տես Սուրբ գրքերի ուղեցույց, «Տաղանդ», scriptures.ChurchofJesusChrist.org):
- «Վաշխը» նշանակում է վարկից գանձվող տոկոս կամ չափազանց բարձր տոկոսադրույք (տես Աստվածաշնչի բառարան, «Վաշխ»):
- Տերը խորհրդանշում է Հիսուս Քրիստոսին:
- Ծառաները խորհրդանշում են մեզանից յուրաքանչյուրին:

Մի նկար նկարեք, որը կպատկերի այս առակը:

# Ոչխարների ու այծերի առակը

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

Կարդացեք Մատթեոս 25.31-46, կամ դիտեք «Ինձ արիք» տեսանյութը (3:14) ChurchofJesusChrist.org կայքում: Հետևյալ տեղեկությունը կարող է օգտակար լինել այս առակի ուսումնասիրության ժամանակ.

- «Աջ ձեռքը». Հին ժամանակներում թագավորի աջ կողմում նստելը ամենապատվավոր դիրքն էր խնջույքի ժամանակ:

Մի նկար նկարեք, որը կպատկերի այս առակը:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *The Parable of the Talents; The Parable of the Sheep and the Goats*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.